1123

2004

# ՍԱՀՄԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

1865
1865

Printed in Turkey

4320
Ա-18
1123
1373-ԱԿ
Printed in Turkey

# ՍԱՀՄԱՆ

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՑ

Յաղագս բարեկարգութեան ուխտի եկեղեցւոյ, և վարժապետաց, և համօրէն ժողովրդոց։

1023

Հրամանաւ ամենապատուի և վեհափառ Պատրիարքի Տ՞ն Կարապետի Սրբազան Աբեղ Եպիսկոպոսի։

91994-57

1830 ՏՊԱԳՐԵԱԼ ՀԱՅԹ

'Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ

'Ի Տպարանի Պօղոսի արապեան ապուջէխցւոյ։

281.6(09)

* Պ՝ի՛մ տէր ընկերցո՛ւածոց հրէշտակա՛ն
վարդապետո՛ւն • հ՝ անփոյշն ասելոյ զշնորհ
հայցէ ոչ՝ ի չէշ էն, որ պոռա՛ չէշ նարգի՛
ընէ՛ն՝ ի ցէ՛հատրո՛ն էրկրէցո՛ն ||
ա • Տիրոջ • գ • 13 •

Примѣръ декламац.

Мусинъ-Пушкинъ Сергѣй

Вып. 5 б. Гимназ.

Зад. 4. Чтобы

1914 Апрѣль

4. Прибыло

Կանոնք բարեաք եթէ բարձ ցին։
կարդ աշխարհի խանդարեա ցին։

# ՍԱՀՄԱՆ

## ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅՆ

Որ եղև յամի տն 1830 'ի Նոյեմբերի 20 'ի Պատ ըիարգարանս ամ Հայոց որ 'ի Կոստանդնուպօլիս։

Յաղագս բարեհարգութեանն ուխտի Էրզրումացւոյ, և Վարժապետաց, և Հանդերձեալ ծառայութեանց։

---

Երբեմն ժամանակի յաւիտենիս այսորիկ՝ որ սրընթաց է քան զնետ հզօրի, և արագաթռիչ քան զարծուի կորովի, ելբրև անիւ մշտաշարժ փոփոխեալ անդուլ՝ փոփոխէ ընդ իւր զվիճակ մարդկան. որով և կարգ և կարգավարուի իւրաքանչիւր ազգի ոչ մնայ մի օրինակ և անփոփոխ։

Բանզի սահմանադրութիւն ինչ կամ սովորութիւն՝ որ երբեմն կարևոր էր և պիտանի, յանցանել ժամանակի սակաւու կամ քաղցի, կարէ լինել անօգուտ և տարժանելի։

Պատահի եւս զի պակասութիւնք ինչ կամ վրիպանք , որպէս 'ի մարմնաւորս՝ նոյնպէս և 'ի հոգեւոր կառավարութիւն սպրդեալ մտանեն , և խանգարեն զբարեկարգութիւն եւ եկեղեցւոյ . և երբեմն յանհոգութէ խնամակալուաց տեղի զբաստեալ անկարգութեցն՝ փոխին 'ի սովորութիւն և յօրէնս ։

Ուստի և Սրբազան հովիւք և տեսուչք հոգւոց հաւատացելոց երբեմն ինքեանք եւեթ , և յոլովակի եւս հանդերձ բարեպաշտ իշխանօք գումարեալ 'ի ժողովս , է՛ զի զխանգարեալ սահմանադրութիւն բարեկարգեցին , և է՛ զի հաստատեցին զնորոգ սահմանս 'ի բարձումն անկարգութեց . և յամի յայսոսիկ անօրինեցին միշտ զօգտակարն և զվայելչական՝ ըստ դիպողութէ ժամանակին յորում գտանէին ։

Ա. յսպիսի էին և կանոնք բարեկարգութէ սրբոց տիեզերական ժողովոց ընդհանուր եկեղեցւոյ , և սահմանադրութիւնք ազգային և գաւառական ժողովոց գումարելոց յազգի մերում յառաջին դարս , և 'ի ժամանակս մեր ։

Ուստի յառաջքան զաւուրս զայսոսիկ յամի ՌՆ 1824 Ի՛ յուլիսի 1 եղև ժողով՝ Պատրիարգարանի. և հաստատեցան կանոնք ինչ՝ ի բարեկարգութի վարժապետաց և ժողովրդականաց. ոչ է տեսանել՝ ի կանոնական կոնդակի անդ՝ տպագրեալ՝ ի նոյն ամի՝ ի յուլիսի 5։

Եւ ապա յամի ՌՆ 1826 ՝ի մարտի 4 միւսանգամ եղև ժողով՝ Պատրիարգարանի. և սահմանեցան կանոնք կարևորք նկատմամբ պարագայից այնր ժամանակի՝ ՝ի կարգաւորութի Եպիսկոպոսական, Եպիսկոպոսական և առաջնորդական աթոռոց, և այլոց ժառանգաւորաց, ստորագրութք և կնքով երեսուն հոգևորական անձանց. ընդ որս էր և Տ՛ Գաբրիել Եպիսկոպոս և Պատրիարգ ՝ծայնոյ քաղաքին Երուսաղէմի։

Որ և տպագրեալ առաքեցան առ գերապատիւ և գահերէց Եպիսկոպոսունս, և նոքօք առ բարձրապատիւ և աթոռաժառանգ Եպիսկոպոսունս, և առ մեծապատիւ ծայրագոյն Պատրիարգ առաջնորդս՝ անյապաղ՝ ի գործ դնել։

Իսկ այժմ որ է ամ տեն 1830 և նոյեմբերի 14, 'ի փոփոխիլ հանգամանաց ժամանակին՝ հարկ եղև տնօրէնութեանն ինչ լինելոյ յառաջին կանոնադրութիւնն։

Ուստի 'ի Հրաւէրմանէ ամենապատիւ և վեհափառ Պատրիարգի Թագաւորական քաղաքիս՝ Տեն Կարապետի Սրբազն Եպիսկոպոսի՝ գումարեալ մեր 'ի Պատրիարգարանն ամ հայոց 'ի կոստանդնուպօլիս 'ի ժողով ազգային, զկանոնս ինչ առաջին ժողովոց, և զայլ ևս օգտակար տնօրէնութիւնս 'ի բարեկարգութի՛ն սրբուխտի եկեղեցւոյ, և վարժապետաց և ժողովրդոց, շնորհիւ և ողորմութեամբ Հոգւոյն սրբոյ սահմանեալ հաստատեցաք, որք են այսոքիկ։

Կանոն · ԺԱ։ Արժան թուեցաւ ՅԾԱ-
խումբ ժողովոյս՝ նորո-
գել զթիւ և զկարգաւորութիւն Ա.ըք
Եպսկան և Եպսկան աթոռոց, և միայն
ԺԷ Ա.ըքեպսարան՝ և լոյս Նպսարան յատ-
կացուցանել յայն ամ գաւառս Է'ի վի-
ճակս, որք են ընդ գերագոյն իշխանութ-
Պատրիարգական աթոռոյն Կոստանդնու-
պօլսոյ՝ ըստ այսմ օրինակի։

Առաջին Ա.ըքեպսարան Նարբոնոյ, ո-
րոյ աթոռ է մենաստանն ՊՀՇու սուրբ
Կարապետի · իսկ Եպսարան՝ Ռաքելոց
վանք, ՅԲ Յովհաննէս, ՅԲ Յովհաննէս
ամրոցու, և քեղի։

Երկրորդ Ա.ըքեպսարան Կեսարիոյ,
որոյ աթոռ է մենաստանն ՅԲ Կարա-
պետի · իսկ Եպսարան՝ ՅԲ Դանիել, և
ՅԲ Ծաղին Թոմարզայու։

Երրորդ Ա.ըքեպսարան Նիկոմի-
դեայ, որոյ աթոռ է մենաստանն կոչե-
ցեալ Զարխափան ՅԲ Ծաղին առմա-
շու · իսկ Եպսարան՝ Ստապաղար, և
Նորգիւղ պազարգեղի։

Չորրդ Արքեպսարան Պրուսայու, որոյ աթոռանիստ եկեղեցին է սուրբ Յիաձին. և եպսարան՝ Կոտինայ, և Պանտրմայ։

Հինգերորդ Արքեպսարան Օմիւռնիոյ, որոյ աթոռանիստ եկեղեցին է սբ Ստեփաննոս։

Վեցերորդ Արքեպսարան Գաղատիոյ, որոյ աթոռ է մենաստանն սբ Յիաձին. իսկ եպսարան՝ Արքիոն ղարահիսար, և Պոլու։

Լոթներորդ Արքեպսարան Անդոկիոյ, որոյ աթոռ է մենաստանն սբ Յնանա. իսկ եպսարան՝ Շէպին ղարահիսար, Թամզարայ, և Յիպտէր։

Ութերորդ Արքեպսարան Մասիոյ, որոյ աթոռ է մենաստանն սբ Յիաձին. իսկ եպսարան՝ սբ Լուսաւորիչ վանքն սեպուհոյ։

Իններորդ Արքեպսարան Սեբաստիոյ, որոյ աթոռ է մենաստանն սբ Կիշան։

Տասներորդ Արքեպսարան Կարնոյ, որոյ աթոռ է մենաստանն Կոչեցեալ

Պտրկու վանք. իսկ եպիսկոպոսն՝ Կարմիր վանք, Հասանղալէ, Խաչկայ վանք, որ Յովհաննէս սպերու, Երզնկայ, և Դերճան։

Պետասանեարդ Արքեպիսկոպոսն Ա՛ա նայ, որոյ աթոռ է մենաստանն վարագայ որ Նշան. իսկ եպիսկոպոսն՝ Նարեկ, Տիրյուսական որդի։ Ընդ սովին Արքեպիսկոպոսութիւն են և երկոքին անապատք՝ Լիմ և Կտուց։

Երկոտասանեարորդ Արքեպիսկոպոսարան Ակնայ, որոյ աթոռ է մենաստանն Ամենափրկիչ. և եպիսկոպոսն՝ Արապկեր, և Պուրուչայ։

Երեքտասանեարորդ Արքեպիսկոպոսարան Տրապիզոնի, որոյ աթոռանիստ եկեղեցին է որ Աստծին. իսկ եպիսկոպոսն՝ Կիւմիւշխանայ, և Բաբերդ։

Չորեքտասանեարորդ Արքեպիսկոպոսարան Տիգրանակերտի, որոյ աթոռ է մենաստանն Բարձրահայեաց որ Աստծին. իսկ եպիսկոպոսն՝ Բալու, և Խարբերդ։

Հնգետասանեարորդ Արքեպիսկոպոսարան Ուռհայու, որոյ աթոռանիստ

եկեղեցին է Ինքնանկար աբ Աշտաճին։

Վ. Եշտասանեերորդ Արքեպիսկոպոսարան՝ Անդրիանուպոլսոյ, որոյ աթոռանիստ եկեղեցին է աբ Թեոդորոս։ իսկ եպիսկոպոսարան՝ Շումլու։

Լ. Օթնևտասանեերորդ Արքեպիսկոպոսարան Թեքիրտաղու, որոյ աթոռանիստ եկեղեցին է աբ Յովհաննէս։

Ա. ստանօր 'ի նշանակել մեր զեպսարանս, ոչ սահմանեմք թէ հարկ է յամենեսին 'ի նոսա նստիլ եպս, զի ծայրագոյն վարդապետք ևս կարեն ըստ օրինի առաջնորդել։ և եթէ ձեռնադրութի հարկաւորեսցի՝ զնուիրեալն առաքել առ Արքեպս գաւառին։

Իսկ եթէ վիճակ եպսարանին ընդարձակ լցէ և բազմաժողով, և առաջնորդ վրդպետն արժանաւոր եպսական բարձր աստիճանի, յայնժամ գիտուք դերապատիւ Արքեպսի գաւառին, և հրամանաւ ամենապատիւ Պատրիարգի ժամանակին, ձեռնադրեսցի եպս վիճակին այնորիկ։

Իսկ ոչ և լցէ վարդապետ՝ որ ոչ ունի զվիճակ ինչ, կամ որ չէ՝ առաջնորդ ընդ

արձակ եպսարանի, մի՛ երբէք ձեռնադ-
րեսցի եպս իբրև միաբան։ Այլ յամ
Ն. ընբեպսական աթոռս՝ պարտ է առաջնոր-
դին ունել զարժանապատուուի եպսա-
կան. զի ըստ կանոնի և ըստ սահմանադրուե
հարցն նոցա կարասցէ լինել վերատեսուչ
և բարեկարգիչ բարձրապատիւ առաջ-
նորդաց եպսարանաց և վանորէից, որք
են ընդ կառավարութեամբ Ն. ընբեպական
աթոռոյն իւրոյ, և ըստ պիտոյից ձեռնադ-
րել զքահանայս և զսարկաւագունս 'ի
պէտս նոցա եկեղեցւոյ և ժողովրդեան։
Կանոն. բ։ Պարտ և արժան է գերա-
պատիւ և գահերէց Ն. ընբեպսաց՝ յիւ-
րաքանչիւր ամի քննել և իմանալ զթիւ
և զհամար վարդապետաց, աբեղայից և
կուսակրօն սարկաւագաց. որպէս զսեպ-
հական վիճակաց իւրեանց՝ նոյնպէս և
զեպսարանաց և զվանորէից, որք են ընդ
Ն. ընբեպական աթոռոյն իւրեանց, և
յականէ յանուանէ գրել զնա 'ի դպրուե
Ն. ընբեպսարանի իւրեանց, և զօրինակ
նորին առաքել 'ի Պատրիարգարանն ամի
ամի 'ի սկիզբն յունվար ամսոյ. զի ար-
ձանագրեսցի 'ի դիւանի անդ։

Կանոն · Գ։ Պարտաւոր թուեցաւ նոյն ժողովոյս, զի որպէս չափ և թիւ կարգեցաւ Ս.ընդեպատկան աթոռոց և եպարտանաց, նոյնպէս չափ և թիւ կարգեսցի աբեղայից և սրկուդաց նոցին ըստ պիտոյից իւրաքանչիւրոց · զոր նշանակեսցուք ստորին միայն զ Ս.ընդեպարտանաց։

1 Ա · Ս.թոռն Տարօնոյ 20 աբեղայ, և 4 սարկաւագ։

2 Բ · Ս.թոռն Կեսարիոյ 8 աբեղայ, և 2 սարկաւագ։

3 Գ · Ս.թոռն Նիկոմիդեայ 8 աբեղայ, և 2 սարկաւագ։

4 Դ · Ս.թոռն Պրուսայու 2 աբեղայ, և 2 սարկաւագ։

13 Ե · Ս.թոռն Զմիւռնիոյ 1 աբեղայ, և 1 սարկաւագ։

5 Զ · Ս.թոռն Գաղատիոյ 4 աբեղայ, և 2 սարկաւագ։

8 Է · Ս.թոռն Եւդոկիոյ 3 աբեղայ, և 1 սարկաւագ։

10 Ը · Ս.թոռն Ամասիոյ 2 աբեղայ, և 1 սարկաւագ։

6 Թ · Ս.թոռն Սեբաստիոյ 4 աբեղայ, և 2 սարկաւագ։

11 Ժ. Ը.թոռն Կարնոյ 2 աբեղայ,
և 2 սարկաւագ։

7 ԺԱ. Ը.թոռն Վանայ 4 աբեղայ,
և 2 սարկաւագ։

12 ԺԲ. Ը.թոռն Ը.կնայ 2 աբեղայ,
և 1 սարկաւագ։

14 ԺԳ. Ը.թոռն Տրապիզոնի 1 աբեղայ,
և 1 սարկաւագ։

4 ԺԴ. Ը.թոռն Տիգրանակերտի 6 աբե-
ղայ, և 2 սարկաւագ։

15 ԺԵ. Ը.թոռն Ուռհայու 1 աբեղայ,
և 1 սարկաւագ։

16 ԺԶ. Ը.թոռն Ը.նդրիանուպոլսոյ 1 աբե-
ղայ, և 1 սարկաւագ։

17 ԺԷ. Ը.թոռն Թոքատոյ 1 աբեղայ,
և 1 սարկաւագ։

Ը.պարքէն յանձն առնեմք գերապա-
տիւ և գահերէց Ը.ղբեպատց՝ ըստ այսմ
հաստատութեան չափ դնել աբեղայից և
սարկաւագաց իւրաքանչիւր եպսարանաց
և վանորէից, ոչք յատկացեալ են աթո-
ռոց իւրեանց. զի նոքա լաւ ևս գիտեն՝
թէ քանի՞ ժառանգաւորք հարկաւոր են
նոցին. միայն՝ի դէպ վարկանիմք նշանա-
կել զթիւ կրօնաւորաց երկուց հռչակա

ւոր անապատաց։ որք են լիմ և կտուց։

Այս երկոքին անապատք՝ ուրոյն ուրոյն ունէին 15 կրօնաւոր քահանայ՝ առանց վարդապետական գաւազանի, 4 սարկաւագ, և 6 սքեմաւոր, որք կը ընացեն 'ի գլուխս իւրեանց զսեաւ գլուխն անապատականաց։

Իսկ եթէ պէտք ինչ էր, յաւելին սքեմաւորքք 'ի սաղմոսերգութիւն և 'ի ժամասացութիւն, այլ ոչ բնաւ քահանայ կամ սարկաւագ։ Այնպէս և վանահարքք նոցին պարտին լինել միշտ կրօնաւոր քահանայ, և ոչ երբէք եպս՝ ըստ հարցն նոցց կանոնաց։ Այս սահմանադրութիւն վանահարց և սքեմաւորաց պահեսցի անշուշտ և յայլ՝ամ անապատս ազգիս, որք կան յայլ և այլ կողմանս և 'ի Թեմն։

Ատանօր 'ի նշանակել մեր զթիւ կրօնաւոր քահանայից և սարկաւագաց, ոչ պարտաւորեմք զգերապատիւ և զգահելոց Արքեպսունս, և զարդոյապատիւ վանահարս անապատաց, հարկաւ պահել զայսչափ թիւով ժառանգաւորս։ այլ կանոնադրեմք աւելի քան զոր նշանակեցաքն չպահել, թէ և ունէցին բա-

ւականութիւն պահելոյ։

Իսկ եթէ այժմ աւելի ի՞նչ ուրեք, հաճեալ եմք շահել զնա սիրով մինչև չա՞փաւորեսցին։ Իսկ եթէ պակաս ի՞նչ, ոչ ստիպեմք յաւելու՝ եթէ չի՞նչ հարկաւոր աբեղայ կամ սարկաւագ, և կամ թէ չի՞նչն բաւական ընուլ զկարևոր պէտս նց։

Կանոն. դ։ Եպիսկոպոսք՝ միայն 'ի սեպհական վիճակս իւրեանց որաստցեն ձեռնադրութիւն, բայց եպիսկոպոսք հրամանաւ Եպիսկոպի իւրեանց, և այն՝ բազում զգուշութիւբ և աչալրջութիւբ, քննելով զնուիրելոյն հաւատոյ ուղղափառութի՞ն, զվարուցն անարատութի՞ն, զհաճոյականն քաղաքավարութի՞ն, և զկարևորացն գիտութի՞ն, նկատելով միանգամայն և'ի հասակին չափաւորութի՞՝ չլինել մանուկ տիրով և կարի ծեր։ Եւ մի՛ և ս վա՞ արքն մերձաւորութե՞, կամ 'ի հարկադրելոյ մարմնաւոր իշխանաց, կամ առ հաճուկս ուրուք, և կամ 'ի սակս օգտի՝ կոչեսցեն զանարժանսն 'ի քահանայութի՞ կամ 'ի սարկաւագութի՞։ զի մի՛ լինիցին հաղորդ մեղաց օտարաց։



9194-57
11423

Կանոն. Ե։ Արաջնորդ ոք՝ եթէ չէցէ
եպս, և պէտս ունիցի քահանայի կամ
սարկաւագի, մի՛ զորոշեալն 'ի պաշտօն
քահանայուն կամ սարկաւագուն մա-
տուցէ առ այլ ոք եպս առնուլ զձեռ-
նադրութիւն, թէ և եպսն այն լցէ նուիրակ
տեղ Արջմիածնի կամ տեղ Արէմի. այլ
վկայականաւ առաքեսցէ առ Արքեպս
գաւառին, կամ հրամանաւ նորին առ
մի ոք յաթոռաժառանգ եպսաց ձեռ-
նադրել 'ի նմանէ։ Եւ մի՛ ոք զարծաթ
'ի կնոջ արկցէ առնուլ զձեռնադրութիւն.
այլ ձրի տացի յամ տեղիս և յամ ժա-
մանակի։

Կանոն. Զ։ Արաջնորդք վանորէից՝ եթէ
պաշտօնէից պէտս ունիցին 'ի կատարել
ղժամերգութիւն, զայն՝ որ գիտիցէ ու-
ղիղ ընթեռնուլ և շարական ասել, օրհ
նեսցեն զնա սքեմաւոր վանական՝ ա-
ռանց ձեռնադրել տալոյ քահանայ կամ
սարկաւագ։

Օ՛ի ահա բազումք 'ի վանորէից են
իբրև զանապատս միանձանց, որոց ոչ
պիտի բազմութիւն աբեղայից կամ սար-

կաւագաց՝ այլ սաղմոսողաց և ժամասաց-
ցից, զոր կարեն կատարել և սքեմաւոր
վանականք։

Կանոն. Է։ Այրագոյն վարդապետք,
որք ունին զառաջնորդութի եպսարանաց՝
շնորհեմք նոցա ունել և զարտօնութի
եպսաց, և լինել նոցա համապատիւ,
նստիլ յաթոռ, և եպսական թագիւ
պատարագել։

Ուստի և սահմանադրեաց նոքա ժո-
ղովս, զի այսուհետև մի՛ ումեք աբե-
ղայի կամ մանաւոր վարդապետի տացի
իշխանութի ծայրագոյն գաւազանի.
այլ միայն նմին որ կացուցանի առաջ-
նորդ յեպսարանի։

Իսկ աբեղայից՝ որք ուսեալ են զար-
հեստն քերականութե, և ունին զտեղե-
կութի ճշմարտութեանն գրոց հնոյն և նորոյս,
և վարդապետական մատենից հարցն նոցա,
տացի նոցա մանաւոր գաւազան և եթ՝
քարոզել և ուսուցանել՝ի ժողովուրդս։

Կանոն. Ը։ Եպիսկոպք կամ առաջնորդք
փոյթ կալցեն յառաջացուցանել զու-
սումն և զգիտութի՝ի վիճակս իւրեանց.

'ի միումաւուր իւրաքանչիւր շաբաթու կոչեսցեն 'ի ժողով զերեւելի իշխանս տեղւոյն, և զաւագ և զաթոռական քահանայս, և խորհրդով և օգնականութեամբ նոցին 'ի քաղաքս և յաւանս և 'ի գիւղորէս՝ ուր ոչ գտանին բարեկարգ դպրատունք, շինեսցեն և հաստատեսցեն զդպրատունս, և կարգեսցեն զիմաստուն և զբարեջան ուսուցիչս. և զուշիմ մանկունսն զատուսցեն յուսումն արուեստի քերականութեան, և այլոց կարևոր գիտութեանց. որպէս զի 'ի զարգանալ հասակի իւրեանց՝ յարմարագոյնքն 'ի նոցանէ լինիցին վարդապետ, կամ քահանայ, կամ վարժապետ 'ի պէտս ազգին։

Իսկ ուր գտանին դպրատունք, և ջունին զհասոյթ, միաբանութեամբ և ձեռնտուութեամբ բարեպաշտօն իշխանաւորաց կարգեսցեն մշտնջենաւոր և բաւական հասոյթ՝ 'ի հոգալ զպիտոյս դպրատանց։

Իսկ եթէ ոչ այսմ բարի առաջարկութեան առաջնորդին, և այլոց ազգային սահմանադրութեանց բովանդակելոց յայսմ կանոնական կոնդակի, շարժեալ 'ի կրից ուսումնատեցութեամբ, կամ յաղագս հասիրտ

քարոյից, կամ յայլ ինչ ախտէ՝ դժկամակեսցի, կամ հակառակ կացցէ՝ և խափանել կամեսցի զազգօգուտ ջանացողութիւն, եթէ եկեղեցական ելցէ այնպիսին, և եթէ ըստ աշխարհի իշխան կամ սոսկական, առաջնորդն վիճակին՝ և հոգեսէր իշխանաւորք խրատեսցեն զնա միաբանիլ ընդ ինքեանս յօգուտ ազգին։

Իսկ եթէ նա յամառեալ կամակորութեանլուր գտանիցի, մահսէրական գրով ծանուսցեն զնմանէ առ Պատրիարգարանն, զի ընկալցի զդատաստան յանդրդնութեան իւրոյ։

Կանոն. Ճ։ Ընքեպս և եպս ի և ելցէ վիճակի, կամ նուիրակ աբեայ Ջմիածնի կամ աբեայ Էմի, 'ի գտանիլ ուրեք յաթոռանիստ եկեղեցւոջ այլոց եպսարանի, մի՛ նստիցի 'ի յատկացեալ աթոռն առաջնորդական, թէ առաջնորդն եպս ելցէ՝ կամ ծայրագոյն վարդապետ, թէ անդ եղեալ ելցէ՝ կամ այլ ուրեք դնացեալ. զի բռնադատութիւն է կանոնական իրաւանց նստիլ յաթոռ առաջնորդական՝ ոչ լինելով առաջնորդ վիճակին.

այլ նատիցի յաթոռ միւսոյ դասին, և ժողովեսցէ զկամաւոր նուէրս և զողորմութիւն ժողովրդեան խորհրդակցութիւն առաջնորդին։ Եւ մի՛ ընաւ յառաջնորդական կամ եկեղեցական գործս ձեռնամուխ լինիցի, դատել կամելով զքահանայ կամ զժողովուրդ վասն որ և իցէ պատճառի. զի չէ՛ արժան մշակի՝ ի հունձս այլոց մանգաղ արկանել։

Կանոն. Ժ։ Լ՝ըքեալս ոք կամ եալս՝ զայն միայն ձեռնադրեսցէ կուսակրօն սարկաւագ կամ քահանայ, որ գիտիցէ զարհեստն քերականութեան, այլ ոչ աւելի քան զսահմանեալ թիւն ձեռնադրեսցէ. իսկ թէ ունի առ իւր աւելի, հոգասցի շահել զնա, և պահել՝ ի վիճակի իւրում։ Այլ եթէ չկարիցէ շահիլ, և կամ վասն բանաւոր պատճառի թողուցու մեկնիլ, տացէ վկայական՝ ի ձեռս նոր՝ երթալ ընակիլ յայլ ինչ մենաստան կամ՝ ի վանս։ Իսկ եթէ աբեղայն կամ սարկաւագն առանց վկայականի՝ ի բաց մեկնեսցի, և կամ առեալ զվկայականն՝ քաղաքէ՝ ի քաղաք անդաստական դեգե-

ըեսցի , այնպիսին ուր եթէ գտանիցի՝ արգելցեն զնա եպիսք կամ առաջնորդք. եթէ ունիցի վկայական , առաջադրեսցեն նմա երթալ բնակիլ 'ի վանս ինչ. և եթէ չունիցի , հարկեսցեն զնա դիմել առ մեծաւոր իւր և հնազանդիլ նմա , առ որ և գրեսցեն ընդունիլ զնա հայրաբար։

Իսկ եթէ հեռաւորուն տեղւոյ , կամ խռովութեան ճանապարհի , կամ այլ ինչ բան բաւական 'ի միջի կայցէ , աղաչական գրով ընկալցի զներուումն անհնազանդութեանէ իւրոյ , և զդիր վկայական երթալ յայլ մենաստան։ Եպա եթէ անլուր գտանիցի , գրեալ ծանուսցեն առ Պատրիարգարանն , զի ընկալցի այնպիսին զարժանաւոր հատուցումն։

Կանոն . ժա։ Եպիսքք և եպսք և առաջնորդք՝ պատուէր տացեն ամ եկեղեցեաց , որք են ընդ կառավարութեամբ իւրեանց , ոչ բնաւ թոյլ տալ անծանօթի ումեք , որ ասէ զանձնէ լինել եպս կամ քահանայ կամ սարկաւագ՝ վարդապետել յատենի կամ քահանայագործել կամ սպասաւորել՝ եթէ ոչ ունիցի 'ի ձեռ-

նադրողքն, կամ 'ի ներկայ առաջնորդէ գաւառին՝ հաստատուն վկայական 'ի ձեռին. այլ թողուցուն նմա կալ արտաքոյ դասին, և աղօթել ընդ ժողովրդեան։

Կանոն. ԺԲ։ Լաթէ հակառակութիւն ինչ կամ վէճ ծագեսցի 'ի մէջ երկուց Ս. ըք եպսաց կամ առաջնորդաց, գրեսցեն զնրան առ Պատրիարգարանն, և'ի նմանէ ընկալցին զնրաւունս և զվճիռ։

Կանոն. ԺԳ։ Հոգևոր իրողութիւն ինչ զոր հարկաւոր է ծանուցանել առ Պատրիարգական աթոռն՝ միայն գահերէց Ս. ըք եպսք գրեալ ծանուսցեն. իսկ եպսք կամ առաջնորդք վեճակաց՝ ծանուսցեն միայն Ս. ըքեպսաց իւրեանց։ Նոյնպէս զնամ առաջարկութիւնս և զպատուէրս Պատրիարգական աթոռոյն՝ Ս. ըքեպսք հրատարակեսցեն առ եպսունս և առ առաջնորդս՝ քարոզել ժողովրդեան։

Կանոն. ԺԴ։ Պահմանեաց ՝ի ժողովս, զի Ս. ըքեպսք և եպսք և առաջնորդք միանխտիր ամ քահանայի տացեն հրամանս ել զխոստովանութիւն. այլ զգուշութիւն քննեսցեն զնուրաքանչիւր քահանայս, և

վնա միայն կարգեսցեն խոստովանահայը, որք ունին զխոհեմութիւն և զուղիղ դատումն մտաց, և գիտիցեն տնօրինել զարժանն ըստ անձին՝ ըստ տեղւոյն՝ և ըստ ժամանակին, և ուսեալ իցեն զգիտութիւն աստուածային և մարդկային իրողութեաց. և տացեն 'ի ձեռս նց զվկայական խոստովանահայը լինելոյ։ Իսկ քահանայ ոք՝ որ ոչ ունի յառաջնորդէն իւրմէ զվկայական խոստովանութիւն, մի՛ իշխեսցէ լսել զխոստովանութիւն. քայց եթէ 'ի հարկաւորութիւն պահու, ուր ոչ գտանիցի խոստովանահայը, և օրհաս մահու առդուրս կայցէ։

Կանոն. ԺԵ։ Յառաջնորդք պարահայեաց դիտողութիւն վերակացու լինիցին միշտ խոստովանահայը քահանայից վիճակի իւրեանց, և հարկ 'ի վր դիցեն նց, զի 'ի հիւանդանալ միոյ ուրուք 'ի ժողովրդենէ՝ առանց իրիք զանցառութեան երթիցեն յայցելութիւն նորին, և յաստուածային գրոց յորդորեսցեն զհիւանդն խոստովանիլ զմեղս իւր, և հաղորդիլ սուրբ և անմահական խորհրդոյ՝ կենարար մարմնոյ և արյ-

Եանն քանի, 'ի բժշկուն հոգևոր և մարմ-
նաւոր ախտից և հիւանդութեց։

Այլ մինչ տեսանիցեն առաջնորդք,
զի խոստովանահայր ոք անփոյթ եղեալ
զառաջինն, և 'ի հասանել հիւանդին 'ի
դուռն մահու, երթայ առնա լսել
զխոստովանութի. զայնպիսին արգելցեն
'ի խոստովանահայր լինելոյ, և ընդ դա-
տաստանաւ արկանիցեն։

Կանոն. ԺԶ։ Առաջնորդք պատուէր տա-
ցեն քահանայից՝ ուսուցանել ժողովուրդ-
դեան անվրէպ ասել զտէրունական ա-
ղօթքն Հայր մեր, և գիտել զուղղափառ
հաւատն յերրորդուին նոր և'ի մի ՝ածուին,
և 'ի մարդեղութի բանին ՝այ. ոչ զի ու-
սեալ զհարկաւորսն 'ի փրկութի՝ արժա-
նապէս ընկալցի զարձակումն, և հա-
ղորդեսցի սրբարար խորհրդոյ մարմնոյ
և արեան ՝ան։

Կանոն. ԺԷ։ Ընթերցք կամ երգք կամ
առաջնորդք՝ յայն ՝ամ վինձակս իւրեանց՝
ուր գտանին ժողովուրդ բազում կամ
սակաւ, առաքեսցեն զխոստովանահայր
քահանայ, առ 'ի կատարել զմկրտութի և

պպատարագ և զայլ սրբարար խորհուրդս
եկեղեցւոյ, և մի՝ երբեք թողուցուն ան-
խնամ զժողովուրդ ՝ն։

Իսկ եթէ ժողովուրդք չունիցին բա-
ւականութիւն շահելոյ զքահանայն, ա-
ռաջնորդն վիճակին յիւրոց արդեանցն
շահեսցի. ոչ զի քահանայն միշտ մնասցէ
անդ առ'ի հովուել զժողովուրդն։

Սակայն եթէ առաջնորդն կամեսցի
առաքել զոմն 'ի քահանայից, և նա ա-
ռանց բանաւոր պատճառի հրաժարեսցի, և ոչ կամեսցի երթալ անդր. յայն-
ժամ իրաւամբք դատաստանի արդելցէ
զնա 'ի պաշտամանէ ՝նը խորհրդոց, մինչ-
չև հնազանդեսցի։

Կանոն. ԺԸ։ Առաջնորդն առանց ստոյգ
քննութեան և դատաստանի՝ մի՝ անասցէ
դանկատանաց ո և ինչ աշխարհականի,
որ դանկատի զքահանայէ ումեքէ. ըստ
վճռոյ առաքելոյն որ ասէ. զերիցուէ
զչարախօսութիւն մի՝ ընդունիցիս, բայց
եթէ երկու և երեք վկայիւք։

Այնպէս մի՝ տացի հաւանութիւն դանկա-
տանաց և չարախօսութեան. յորժամ չարա-

խօսէ զառաջնորդէ իւրմէ աբեղայ ոք, կամ քահանայ, կամ ո և իցէ աշխարհա-
կան՝ առանց մահսէրական գրուէ իշխա-
նաւորաց տեղւոյն, և առանց բարուոք
քննութեան և դատաստանի հոգևորական
ժողովոյն։

Կանոն. ԺԹ։ Արգելս ոք՝ յորժամ տեսանի-
ցէ զնուիրեալն՝ թէ չունի զբաւական
գիտուն, մի՛ առ ժամայն ձեռնադրեսցէ
զնա. այլ առաքեսցէ 'ի վանս վիճակին,
կամ 'ի դպրատուն քաղաքին՝ ուսանիլ
առ ժամանակ մի զկարևոր գիտութիս,
և ապա ձեռնադրեսցէ։ Բայց 'ի տեղին
յայն առաքեսցէ զոմն քահանայ հովուել
զժողովուրդն, մինչև ձեռնադրեսցէ
զնուիրեալն և առաքեսցէ անդր, զի մի՛
առանց քննչի մնասցեն հաւատացեալք։

Կանոն. Ի։ Առաջնորդք՝ յաթոռանիստ
մենաստանս կամ յերևելի վանս ունի-
ցին ուսումնարան. ուր ընթերցասէրք՝
ոք կամին առնուլ զկարգ քահանայութէ,
կամ զաստիճան վարդապետութէ, եկեալ
անդր ուսանիցին զարհեստն քերականու-
թեան և զհարկաւոր գիտութիս, և ապա
ընկալցին զկարգ։

Կանոն . իա։ Յառաջնորդք զգոյշ լինիցին, և մի՛ վաղվաղակի տացեն հրաման պսակի, յորժամ օտարական ոք կամիցի ամուսնանալ՝ ի վիճակի իւրեանց, զի մի՛ գուցէ այրն այն ելցէ կանամբի . այլ խնդրեսցեն՝ ի նմանէ վկայական յառաջնորդէ երկրին լինել անկին . ուր գրեալ ելցէ գծագրուն դիմաց և չափ հասակի նր . զի մի՛ խաբէութիւն ինչ լինիցի։

Կանոն . իբ։ Պարտ և արժան է առաջնորդին առանց դանդաղանաց ջանալ միշտ առ՝ի քարեկարգել զժողովուրդ վիճակի իւրոյ, իբրև հովիւ քաջ զվերաւորեալն մեղօք բժշկել հոգևոր սպեղանեօք, և զմոլորեալն դարձուցանել՝ ի դաւիթ երկնաւոր հօտապետին։

Այպա առաջնորդն յորժամ լուեալ տեղեկացի վա՛ ուրուք, թէ ելցէ սովորաբար դառն հայհոյիչ, որ խցեալ զլսելիս՝ ի լուր ՅԾային պատուիրանաց՝ անդուռն բերանով հայհոյէ զկենդանիս և զմեռեալս, զկրօնս և զհաւատ, և զայլ ամ վերաբերեալս առ ՅԾ . կամ թէ ելցէ այր երդմնակուռ, որ անխտրաբար կոչէ

զանուանն ՅԱՅ 'ի վերայ մնոտեաց անխիղճ մտօք, խրատեսցէ զայնպիսին և յանդիմանեսցէ, յորժամ ինքն և նա միայն լիցեն։ Իսկ եթէ ոչ լուիցէ, խրատեսցէ միւսանգամ առաջի խոստովանահայր քահանայի նոր, և երկուց և երից խոհեմ և բարի անձանց։ Իսկ եթէ անլուր գտանիցի և ոչ զգաստասցի, կոչեսցէ զնա 'ի ժողով քահանայից տեղւոյն և արգոյ իշխանաւորաց. սաստեսցէ 'ի նա, և ըստ պառնասցի բանիւ ՏՆՆ՝ պատուհասել առանց խնայելոյ։ Որ թէ յետ այնորիկ տակաւին կացցէ անզեղջ սրտիւ 'ի նոյն յամառութեան, և ոչ դարձցի 'ի չարաչար սովորութենն, յայնժամ իբրև զնզովեալ ոք՝ և իբրև զփտեալ և հոտեալ անդամ՝ 'ի բաց ընկեսցէ 'ի մարմնոյն քի, որ է եկեղեցի նոր, զի մի՛ և յայլս ճարակ գտցէ իբրև զքաղցկեղ անբժշկելի։

Բանզի զայս և ՏՐՆ իսկ պատուիրեաց ասելով, եթէ մեղեցէ քեզ եղբայր քո, երթ յանդիմանեա՛ զնա՝ յորժամ դու և նա միայն լիցէք. եթէ լուիցէ քեզ, շահեցար զեղբայրն քո։ Այլ եթէ ոչ լուիցէ քեզ, առ ընդ քեզ մի և ա՝

կամ երկուս . զի 'ի բերանոյ երկուց և յերից վկայից հաստատեսցի ամ բան։ Իսկ եթէ նց ոչ լուիցէ , ասասջիր յեկեղեցւոջ։ Այլ թէ և եկեղեցւոյն ոչ լուիցէ, եղիցի քեզ իբրև զհեթանոսն և զմաքսաւորն։ Ամէն ասեմ ձեզ . զոր կապիցէք յերկրի՝ եղիցի կապեալ յերկինս։

---

Կանոնք Բարեհաւրգոնքն Վարժապետաց։

Կանոն . ա։ Վարժապետք պարտին լինել ուղղափառ 'ի հաւատս՝ ըստ անստերիւր աւանդութեան հայաստանեայց ազգ եկեղեցւոյս , և քաջ վարժք յուսմունս , և վկայեալ 'ի վարս բարիս։ Ոչ զի ողջամիտ վարդապետուքն ուսուցանիցեն զհարկաւոր մասունս հաւատոյ , և կանոնաւոր դասատուութիւն զարհեստ և զգիտութիւն , և առաքինի քաղաքավարութիւն օրինակ բարի լինիցին աշակերտաց իւրեանց։

Կանոն . բ։ Վարժապետք որոշեսցեն զուշին և զգրաւարժն 'ի մանկանց՝ աւանդել նց զուսումն արհեստի քերա-

կանութեան, և հետ զհետէ զայլ պիտանի գիտութիւն. իսկ զփափկաձայնսն զատուսցեն՝ ուսուցանել նոցա նաև զշարական և զմեղեդի. որպէս զի մանկունք ըստ իւրաքանչիւր բնաւորութեան յառաջասցին յուսումն գիտութեան, և երգոց հոգևորաց։

Կանոն. դ։ Ա՝ արժապետք և մանկավարժք պատուիրեսցեն մանկանց՝ մի՛ երբեք խօսիլ ընդ միմեանս 'ի լեզու օտար՝ այլ 'ի հայրենի 'ի հայկական բարբառ, և որչափ կարելի է անխառն յօտարազնեայ բառից 'ի մաքուր աշխարհաբառ. և ուր հայերէն աշխարհաբառն պակասիցի, զգրաբառն նորին 'ի կիր արկանիցեն. որ յաճախ գործածութիւնն լինիցի նոցա ընտել և սովորական իբրև աշխարհաբառ։

Կանոն. դ։ Մանկավարժք՝ մի՛ տարապարտուց աշխատ արասցեն զմանկունս սերտ 'ի բերան ունել զգիրս՝ ընթեռնուլ յեկեղեցւոջ. այլ փոխանակ նոցին տացեն սերտել զաղօթս ինչ հարկաւորս՝ աղօթել նովաւ առ Ած։ Այս և պատ-

ուխրեսցեն սերտել զՀարկաւոր մասունս քրիստոնէական հաւատոյ, զի յամ աւուր յորոշեալ ինչ ժամու՝ փուխոխակի երկու մանկունք հարցպատասխանի արասցեն, և այլքն ամունկնդիր կացցեն։ ոչ զի վարդապետութիւն քրիստոնէական անջնջելի տպաւորեսցի 'ի միտս նց՝ անդստին 'ի տղայական մատաղ հասակի իւրեանց։

Կանոն. Ե։ Ա՝նանկավարժք ոչ այնչափ գանիւ՝ որքան բանիւ խրատու ջանասցին կրթել զմանկունս։ և մի՛ լիցի բնաւ ապտակ ածել, ականջ քաշել, կսմիթտալ, աքացի կամ բռնցի հարկանել, կամ ըստ դիպուածոյ ձաղկել։ զի այնպիսի անակնկալ և անպատկան հարուածք՝ առնեն զմանկունսն ուշամոռաց և յանդուգն։

Կանոն. Զ։ Ա՝նանկավարժք սաստիկ պատուիրանաւ արգելցեն զմանկունս, զի մի՛ խօսիցին սուտ, մի՛ երդնուցուն երբեք, մի՛ ծաղրեսցեն զոք, և մի՛ բնաւ հայհոյեսցեն, և մի՛ հանցեն բան տգեղ և աղտեղի 'ի բերանոց իւրեանց։ այլ ամ

բանք շրթանց նոցա լինիցին ճշմարիտ, բարեհաճոյ և համեստ։

Նաև և ստէպ խրատեսցեն և կրթեսցեն զնա՝ յամի հնագանդ լինել ծնողաց, առանց հրամանի նոցն չերթալ ուրեք, չխոսիլ ընդ այլազգիս 'ի փողոցս, այլ ամենայն ոչ ուրեք պատկառ և պարկեշտ լինել։

Կանոն. Է։ Պարժապետք կամ մանկավարժք 'ի կոչէին զմանուկ ոք՝ մի՛ ձայնեսցեն առ նա գռեհկական բառիս ծ՝, այլ զյատուկ անուն տացեն՝ պետրոս կամ յովհաննէս. իսկ մանկունք յաւելեալ զբառդ եղբայր, կոչեսցեն զմիմեանս եղբայր պետրոս կամ եղբայր յովհաննէս։

---

## Կանոնք Բարեկարգութեան ծողովրդոց։

Կանոն. Ա։ Ծողովուրդք պարտին հպատակ լինել առաջնորդաց իւրեանց, և անսացօղ ամ առաջարկուածոց նոցն 'ի բարեկարգութիւն նոյն եկեղեցւոյ և դպրատանց։ Զի առաջնորդաց է առաջարկել զբարին և զօգտակարն. Ընդունիմ

կարդեալ էն 'ի հոգւոյն աբեյ տեսուչ և հո
վիւ ժողովրդէն, և կառավար եկեղեցւոյ
աբեյ։ Իսկ ժողովուրդք պարտին ձեռն
տու և օգնական լինել և կատարող առա
ջարկուածց նոցին. ապա թէ ոչ այսպէս,
ոչ ինչ բարի կարէ յառաջանալ։

Կանոն. բ։ Եղեալք ժողովրդեան միա
բանութիւն ունիցին ընդ միմեանս, և ընդ
հոգևոր հովուի իւրեանց՝ հաստատել
զդպրատունս յամ քաղաքս և յաւանս
և 'ի գիւղս, և կարդել նոցա մշտնջենաւոր
հաստատ, զի կրթեսցին մանկունք ազ
գին հոգևոր և մարմնաւոր կրթութիւն.
և լինիցին բարեպաշտօն քրիստոնեայ, և
բարի քաղաքացի։

Կանոն. գ։ Եղնօղք փոքր մեծ ունիցին
վա՛ բարեյաւութիւն որդւոց իւրեանց.
անդստին 'ի մատաղ հասակի ուսուցանեն
նոցա խաչակնքել զերեսս իւրեանց, երկիր
պագանել ա՛յ և աղօթել, և զայլ գործս
աստուածպաշտութիւն առնել որքան կարելի է
մանկական տիոց նոցա. որոց օրինակ
բարի լինիցին ծնողքն 'ի բանս 'ի գործս
և 'ի շարժմունս։

Եւ մինչ մանուկն լինիցի վեցամեայ, հրամանաւ առաջնորդին կամ փոխանորդի նորին առաքեսցեն 'ի դպրատուն յըն թերցանուն գրոց, և յուսումն մասանց հաւատոյ՝ ոչք հարկաւոր են 'ի փրկուն։

Եւ եթէ սրամիտ լիցէ մանուկն, թողցեն զնա ուսանիլ նաև զարհեստն քերականութեն և զայլ դիտութիս՝ մինչև 'ի չորեքտասան ամ հասակի իւրոյ. և առանց գիտութեն և հրամանի առաջնորդին՝ կամ փոխանորդի նորին՝ մի' հանցեն 'ի դպրատանէ առ'ի տալ յուսումն մարմնաւոր արուեստի. զի մի' թերակատար մնացեալ՝ մոռացի զուսեալն. և ջանք և աշխատութի վարժապետին և մանկանն 'ի դերևս ելանիցէ։

Կանոն. դ. Պ՝ի ոչ 'ի ժողովրդենէ իշխանաւոր կամ սոսկական՝ ստիպեսցէ զառաջնորդն անձամբ անձին, կամ 'ի ձեռն բռնաւորի ուրուք ձեռնադրել զոք սարկաւագ կամ քահանայ. զի այս ամ հոգևոր հովուացն է անկ՝ քննել և ընտրել զարժանաւորն՝ վկայութեբ լրութեն ժողովրդեան տեղւոյն։

Կանոն. Է։ Պարտ է քրիստոնէին յա-
ւուրս կիւրակէից դատարկանալ 'ի մարմ-
նաւոր գործոց, և կանխել յեկեղեցի
նբ 'ի պաշտօն և 'ի փառաբանութիւն մեծ
վայելչութեն նոյ. 'ի մէջ եկեղեցւոյ չխօ-
սիլ ընդ ումեք, և բարձրաձայն չաղօ-
թել. ունկնդիր լինել հոգեշահ խրա-
տուց, զոր քարոզիչք ածային պատգա-
մաց հնչեցուցանեն 'ի լսելիս նց. ամբողջ
տեսանել զնբ պատարագն, և ջերմեռան
դին սրտիւ աղօթել առ ած. ոչ գրեալ
կայ 'ի գիրսն կոչեցեալ Ապտեր հոգւոյ։

Կանոն. Ը։ Պարտ է քրիստոնէին ստէպ
մատչիլ 'ի խորհուրդ ապաշխարութեն. և
կամ գոն է 'ի հինգ տաղաւարի կատարել
զղջմամբ խոստովանիլ, և հաղորդիլ նբ
և փրկաւէտ խորհրդոյն։ Իսկ 'ի հիւան
դութեն, ընդ մարմնաւոր բժշկին՝ մանա-
ւանդ թէ յառաջ քան զնա՝ կոչել զհո-
գևոր բժիշկն առ 'ի խոստովանիլ և հա-
ղորդիլ, և գտանել զբժշկութեն հոգւոյ
և մարմնոյ։

Կանոն. Է։ Ողողուրդք զքահանայս ա-
զատ պահեսցեն 'ի քաղաքական հարկաց.

իսկ եթէ այլապէս պահանջեսցեն՝ ինքեանք հոգասցեն զայն։

Պարտէն աղաչեմք զամ հովիւս և զվարդապետս բարուոք վերակացու լինել հօտին, օրինակ զանձինս ընծայեցուցանելով՝ բանիւք, գնացիւք, սիրով, հաւատով, սրբութեամբ, և ամ գործովք բարութեան։ Քանզի գրեալ է եբ առաքեալն պօղոս, որք բարուոք վերակացու լինին երկցունք կրկին պատուոյ արժանի եղեցին. մանաւանդ որք ուսուցանեն բանիւ և վարդապետութեամբ։

Ուստի քարոզեսցեն ժողովրդեան ըղպատգամն այս անդանդաղ ամ համարձակութեամբ. ուսուսցեն նոցա փութալ պահել զսէր առ ամ, զմիաբանութիւն առ ընտանիս հաւատոյ, և զքաղցրութիւն առ ամենեան։

Խրատեսցեն զնա զգուշանալ յարբեցութենէ՝ և յանգործ դատարկութենէ, և լինել համեստ և զգաստ, աշխատիլ ձեռօք՝ և հոգալ զհարկաւորս պէտս անձին և ընտանեաց, և չմնալ կարօտեալ։

Պատուիրեսցեն նոցա լռեցուցանել զլեղուս 'ի չարաչար դատողութենէ և 'ի բամբասանաց, ուսեալք յառաքելոյն՝

թէ բամբասողք զարքայութիւն աստ ոչ ժառանգեն։

Յուշ արասցեն նոցա՝ ընդ բարեպաշտութեան հաւատոց ունել և զգործս բարիս, լսելով ձայնին կենարարին որ ասէ. ոչ ամ որ ասէ ցիս տէր տէր՝ մտցէ յարքայութիւնն երկնից, այլ որ առնէ զկամս հօր իմոյ որ յերկինս է։

Պատուէր տամք և դասուց քահանայից հնազանդ լինել առաջնորդի իւրեանց իբրև տէր, և մի՛ իբրև մարդոյ ումեք. առանց հեղգութեամբ կատարել զաստուածային պաշտամունս, և անարատ վարուք քաղաքավարիլ՝ իբրև մեռեալ աշխարհի և կենդանի աստ։

Ուսուցանել միոյ միոյ 'ի ժողովրդենէ կնքել զերեսս նշանաւ խաչին, և անսխալ ասել զաղօթսն տրուն՝ ական, և զհանգանակն հաւատոյ, և ուղղափառ դաւանութեամբ խոստովանիլ զերրորդութիւնն աբ և զմի աստուծութիւն, և զկենդանարար մարդեղութիւն որդւոյն աստ, և զայլ փրկաւէտ մասունս հաւատոյ, որք անվրէպ միջնորդք են յաւիտենից կենաց։

Լաւ և հոգևոր բանիւք օգտակար

խրատու խնամել միշտ զժողովուրդ ՝ն, զոր գնեաց պատուական արեամբ իւրով. և ստէպ յորդորել զնա՝ գալ՝ի խոստովանութիւն մեղաց՝ և արժանաւորիլ ՝ի հաղորդութեան, առանց աչառութեան յանդիմանել զմեղսասէրս, և դարձեալ մխիթարել։

Ա՛չ խնդրել ինչ զդիւրութիւն անձին և զհանդիստ, այլ յա՛մ սրտէ և՝ի մաց բարեաց տքնիլ անդադար վա՛ փրկութեան հոգւոց նց՝, հաւատացեալ հոգեշունչ բանի առաքելոյն որ ասէ, եթէ որ դար ձուցանէ զմի ոք ՝ի չար ճանապարհէ, փրկեսցէ զոգի իւր ՝ի մահուանէ։

Այնպէս և վարժապետաց և մանկավարժից խրատ տալք, օրինակաւ անձանց իւրեանց ուսուցիչ լինել մանկանց ՝ի բարին։ Զ՝մեծայն բանք բերանոյ իւրեանց լինիցին միշտ զգուշաւոր և համեստ՝ իբրև աղխ համեմեալ. մի՛ երբէք լուիցի ՝ի նոցանէ հայհոյութիւն կամ անէծք կամ այպանումն. և ա՛մ վարք նց՝ լինիցին բարեկարգ և արժանավայել։ Զ՝ի զոր օրինակ մանկունք երկնչին ՝ի մանկավարժից, զի մի՛ յանցաւոր գտեալ խրատ

տեսցին գանիւ. սոյնպէս և առաւել ևս երկիցեն մանկավարժք, զի մի՝ պակասութիւն ինչ 'ի բանս կամ 'ի շարժմունս տեսեալ 'ի նոսա մանկանց՝ զնոցն և յանձինս իւրեանց բերիցեն, օրինակ առաջի ունելով զդաստիարակս իւրեանց։

Պատուէր տամք և ժողովրդոց լինել գթած, բարեսիրտ, կարեկից կարօտելոց, ջանացօղ և հոգածու պայծառուն դպրատանց. բանիւք և արդեամբք գործակից լինելով առաջնորդացն իւրեանց, որք գուն գործեն ծաղկեցուցանել զուսումն և զգիտութիւն։

Ոչ որս և յորդորեմք սիրով, գնոց գնել զժամանակն, և զբօանուլ ընթերցանութիւն գրոց. և մի՝ զպատուական ժամանակն վարկպարապել ծախել յանպիտան և 'ի մնոտի խաղս, որք չունին ինչ օգուտ. և ամենայն օրինակ բարեաց լինել զաւակաց իւրեանց 'ի քաղաքական կեանս, և 'ի կրօնս ճշմարտութեան։

Հուսկ ապա պատուիրեմք Ս. ընդ ամենայն՝ եպսաց՝ առաջնորդաց՝ և համօրէն ազգ ուխտի եկեղեցւոյ՝ կամակար սիրով հնազանդիլ բարեկարգ սահմանադրութեանց

ՀԾԱԳՈՒՄԱՐ ԺՈՂՈՎՈՅՍ, ԵՎ ԱՌԱՆՑ ՁԱՆ-
ՑԱՌՈՒԹԵԱՆ 'Ի ԳՈՐԾ ԴՆԵԼ. ՁԻ ԱՐ-
ԴԱՐԵ ԵԹԷ ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ ՀԱՅԱՏԱԿ ԼԻ-
ՆԻՑԻՆ ԿԱՆՈՆԱՑ, ՍՆՏԱՐԱԿՈՅՍ ՈՒՐԵՄՆ
ԵՎ ԺՈՂՈՎՈՒՐԴՔ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅԱՏԱԿ ԼԻՆԻՆ
ԻՆՔԵԱՆՑ։

Ա՛յլ ԱՐՔԵՊՍՔ՝ ԵՊՍՔ՝ ԱՌԱՋՆՈՐԴՔ՝
ԻՇԽԱՆՔ՝ ԵՎ ՈՍՈՒՑԻՉՔ՝ ԵՐ ԻՐԱՔԱՆՉԻՒՐ
ՊԱՐՏԱՒՈՐՈՒԵ ՊԱՐՏԻՆ ԱՄ ՓՈՒԹՈՅ ՊԸՆ
ԴՈՒԹԸ ՉԱՆԱԼ 'Ի ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՄ ԱՀՀ-
ՄԱՆԱԴՐՈՒԹԵՑ ԵՎ ՊԱՏՈՒԻՐԱՆԱՑՍ ԱՅ-
ՍՈՑԻԿ. ՉԻ ԸՆԿԱԼՑԻՆ ԶՎԱՐՃՍ ՅԱՅ, ԵՎ ԶԴՈ
ՎՈՒԹԻՒՆ 'Ի ՄԱՐԴԿԱՆԷ։

Ա՛յլ ԹԷ ՈՔ ԴԺԿԱՄԱԿՈՒԸ ԱՊԱԽՏ
ԱՐԱՍՑԷ, ԿԱՄ ՍՏՈՒՆԳԱՆԵՍՑԷ, ԿԱՄ
ՀԱԿԱՌԱԿԵՍՑԻ ԿԱՆՈՆԱՑՍ ԱՅՍՈՑԻԿ, ԱՅՆ-
ՊԻՍԻՆ ՊԱՐՏԱՒՈՐ ԼԻՑԻ ԱՅ՝ ՎԿԱՅՈՒԹԸ
ԽՂՃԻ ՄԱՑՆ ԻՒՐՈՑ. ՈՐՈՒՄ ԱՄԵՆԱՅՆ ԶՕ-
ՐՈՒԹԵԱՄԸ ՎԸԺԺԽՆԴԻՐ ԼԵՑՈՒՔ ԱՌԱՆՑ
ԱԿՆԱՌՈՒԹԵԱՆ ԻՆՉ՝ ԻԲՐԵՒ ԽԱՆԳԱՐՈՂԻ
ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԵԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՒՈՅ ԵՎ
ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ։

Ա՛Յ ԱՀԱ ՇՆՈՐՀԻՒ ԱԲ ՀՈԳԵՈՅՆ ԳՈՒ-
ՄԱՐԵԱԼՔՍ ՍԱՏԱՆՕՐ՝ ԽՈՍՏԱՆԱՄՔ ԵՎ ՈՒԽ
ՏԵՄՔ 'Ի ԴԻՄԱՑ ՄԵՐ ԵՎ 'Ի ԴԻՄԱՑ ՀԱՄՕ-

րէն ազգիս՝ անթերի կատարել զսահ-
մանադրութիւնս որ 'ի սմա են բովանդա-
կեալ. վասն որոյ և իւրաքանչիւր յականէ
յանուանէ ստորագրեալ կնքեցաք։

ա. Կարապետ Արքեպս և Պատրիարգ
Թագաւորական քաղաքին Կոստան-
դնուպոլսոյ։
բ. Յովհաննէս արքեպս քարոզիչ սուրբ
Խաչ եկեղեցւոյն իւսկիւտարու։
գ. Սարգիս արքեպս մայրաքաղաքին
անդրիանուպոլսոյ։
դ. Ստեփաննոս արքեպս Նիկոմիդեայ։
ե. Արաքել արքեպս Թէքիրտաղու։
զ. Յարութիւն ծայրագոյն վարդապետ առաջ-
նորդ պրուսայու և կուտինայու։
է. Յակոբ ծայրագոյն վարդապետ ա-
ռաջնորդ պանորմոյու։
ը. Յովհաննէս վարդապետ փոխանորդ
սրբոյ աթոռոյն Էջմի։
թ. Տէր Արաքել փոխանորդ Տէն Կա-
րապետի աբեղն Պատրիարգէն կոս-
տանդնուպոլսոյ, և աւագ քահա-
նայ աթոռանիստ եկեղեցւոյն սուրբ
ածածնի։

Ժ. Պաւլոս վարդապետ կարնեցի փոխանորդ եկեալ 'ի դիմաց Տեառն Պաբրիէլի Պատրիարգին Եէմի։

ԺԱ. Ընդրէաս վարդապետ գրագիր Պատրիարգական աթոռոյն կոստանդնուպօլսոյ։

ԺԲ. Յովհաննէս վրդպետ փոխանորդ արքեպսական աթոռոյն մշու եւ կարապետի։

ԺԳ. Յովհան վարդապետ նուիրակ եբեր երուսաղէմի։

ԺԴ. Պօղոս վրդպետ փոխանորդ ան ատեփաննոսի արքեպսին Նիկոմիդեայ։

ԺԵ. Պրիգոր վարդապետ քարոզիչ եւ Հրեշտակապետ եկեղեցւոյն պալատու

ԺԶ. Մատթէոս վարդապետ քարոզիչ Ալնդրակատար եւ ճգաճգին եկեղեցւոյն օրթագիւղի։

ԺԷ. Յովհաննէս վարդապետ որ թադէոսեան քարոզիչ եւ Լուսաւորիչ և եւ Խրրորդութի եկեղեցեացն ղալաթիոյ և պէկօղլուի։

ԺԸ. Պետրոս վարդապետ ալթունեան քարոզիչ եւ Պէորդ եկեղեցւոյն սամաթիոյ։

ԺԹ. Բարդուղիմէոս վրդապետ նախկին առաջնորդ արքեպիսկոպոսն աթոռոյն կարնոյ։

Ի. Յովակիմ վարդապետ միաբան սրբոյ Երուսաղէմի։

ԻԱ. Պօղոս վրդապետ քարոզիչ սրբ Կարապետ եկեղեցւոյն իւսկիւտարու։

ԻԲ. Թադէոս վրդապետ անդրիանուպոլսեցի քարոզիչ սրբ Ստեփաննոս եկեղեցւոյն խասգիւղի։

ԻԳ. Լփրեմ վարդապետ քարոզիչ սրբ Աճաժին եկեղեցւոյն պէշիկտաշու։

ԻԴ. Յարութի վարդապետ սարայլեան քարոզիչ սուրբ Նիկողայոս եկեղեցւոյն Թօփխանէի։

ԻԵ. Յակոբ վրդապետ քարոզիչ սրբ Սանդուխտ եկեղեցւոյն Հիսարու։

ԻԶ. Գրիգոր վարդապետ վանեցի քարոզիչ սրբ Յովհաննէս եկեղեցւոյն նաուլբխանէի։

ԻԷ. Աբրահամ վարդապետ քարոզիչ սրբ Յակոբ եկեղեցւոյն խասըմփաշայի։

ԻԸ. Կարապետ վարդապետ միաբան սրբոյ Երուսաղէմի։

ԻԹ. Յակոբ վարդապետ միաբան որք
Եպիսկոպոսն սեբաստիոյ։

Լ. Տէր Յովսէփ աւագ քահանայ եւ
Գէորգ եկեղեցւոյն սամաթիոյ։

ԼԱ. Տէր Յովհաննէս աթոռական քա-
հանայ եւ Հրեշտակապետ եկե-
ղեցւոյն պալատու։

ԼԲ. Տէր մանուէլ աւագ քահանայ եւ
Լուսաւորիչ եկեղեցւոյն զալաթիոյ։

ԼԳ. Տէր բարդուղիմէոս աւագ քա-
հանայ եւ Խաչ եկեղեցւոյն ի-
կիւտարու։

ԼԴ. Տէր իգնատիոս աւագ քահանայ
Խնդրակատար եւ ճծաձին եկե-
ղեցւոյն օրթագիւղի։

ԼԵ. Տէր գրիգոր աւագ քահանայ եւ
Ստեփաննոս եկեղեցւոյն խասգիւղի։

ԼԶ. Տ՝ սահակ աթոռական եւ Կարա-
պետ եկեղեցւոյն իսկիւտարու։

ԼԷ. Տ՝ մկրտիչ աւագ քհնյ եւ Նի-
կողայոս եկեղեցւոյն թօփխանէի։

Նաեւ բազում քահանայք աշխարհա-
կան իշխանք որք ամբին ստորագրեալ
կնքեցին։

# ՏՊԱՐԱՆ

1830 — ԱՄՍԱԹ

# ՅՕՐԹԱՄԱԳԻՐՔ